ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/16185-2023

«23»_____08_____2023թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2023 թվականի օգոստոսի 14-ի հ/891007 Ձեր գրության՝ ներկայացնում ենք պատասխանները.

1. 2. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ԱՄՆ-ի և Եվրամիության պատասխանատու պաշտոնյաների հետ արևմտյան պատժամիջոցների կամ դրանք շրջանցելու խնդրի շուրջ ծագող անհանգստությունները փարատելու համար: Ի՞նչ աշխատանքներ են տարվում հայկական բիզնես շրջանակների հետ, որպեսզի նրանք չհայտնվեն պատժամիջոցների թիրախում, եթե միաժամանակ ակտիվ բիզնես գործունեության մեջ են ռուսաստանցի, ամերիկացի կամ եվրոպացի իրենց գործընկերների հետ:

Հայաստանը հետամուտ է իր տնտեսական շահերը պաշտպանելուն և մաքսային, բանկային և այլ թույլատվական գործիքակազմով աշխատանք է տարվում, որպեսզի ՀՀ ընկերությունները չընկնեն արևմտյան պատժամիջոցների տակ: Հայաստանը մի կողմից կարողանում է ապահովել բարձր տնտեսական աճ, իսկ մյուս կողմից ապահովել այն, որ մեր երկրի բանկային և տնտեսական համակարգը չհայտնվի որևիցե երկրորդային պատժամիջոցների տակ՝ միաժամանակ իրականացնելով նաև ԵԱՏՄ գործընկերների նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

Հայաստանում որևէ կերպ չեն փորձում օժանդակել պատժամիջոցների շրջանցումը ռուս գործընկերների կողմից և արևմտյան գործընկերների մոտ առկա մտահոգությունները փարատելու համար վերջիններիս հետ հանդիպումների ընթացքում ներկայացվում են համապատասխան ապրանքատեսակների առևտրի հիմքերը, միաժամանակ բացատրելով, որ այն գործողությունները, որոնք իրականացնում են հայաստանյան ընկերությունները,

նպատակ չունեն Հայաստանը ենթարկելու երկրորդային պատժամիջոցների ռիսկի, այլ բխում են Հայաստանի տնտեսական շահերից:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը օգոստոսի 1-ին լրատվամիջոցներին ասել է, որ Հայաստանի կառավարությունն «ամեն ինչ անում է, որ Հայաստանի ընկերությունները չընկնեն երկրորդային պատժամիջոցների տակ»: Ըստ այդմ նա հիշեցրել է կառավարության որոշման մասին, որով 38 վեցանիշ ապրանքների նկատմամբ սահմանել է արտահանման վերահսկողություն:

3. Ի՞նչ որոշման մասին է նախարար Վահան Քերոբյանը հիշատակում, ըստ որի, ինչպես ինքն է ասում, «38 վեցանիշ ապրանքների նկատմամբ սահմանել է արտահանման վերահսկողություն»:

Խոսքը ՀՀ կառավարության մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 808-Ն որոշման մասին է (https://www.arlis.am/documentview.aspx?docID=178336):

4. Ինչպե՞ս է այս հարցը կարգավորվել ԵԱՏՄ գործընկերների հետ, քանի որ խոսքը փաստացի միասնական մաքսային և առևտրա-տնտեսական տարածքում արտահանման պատնեշի կիրառման մասին է:

Համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ հոդվածի՝ ապրանքների փոխադարձ առևտրում անդամ պետություններն իրավունք ունեն միակողմանի կիրառել սահմանափակումներ: Հարկ է նշել, որ ԵԱՏՄ անդամ մյուս պետությունները ևս, ղեկավարվելով պայմանագրի նշված դրույթով, կիրառում են նման սահմանափակումներ:

Հարգանքով՝

8/22/2023

X

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Signed by: VARDAZARYAN LILIT 7103710112

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ

Կատարող՝ Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Անժելինա Չիլինգարյան, +37411597211